

կը դաստիարակէ Իգնատիոս վրդ.ի Մեկնութիւն Ղուկասու գիրքէն,
ինչպէս որ յուշագրած է նոյն գիրքին ՉԻԱ. (=1272) թուական
ձեռագրին յիշատակարանին մէջ, (ՄՁ. Թ. 352):

Կը դնենք հոս Արճիշեցի Գրիգոր վրդ.ին ինքնագիր ոտա-
նաւոր յիշատակարանը որ կը գտնուի վերոյիշեալ ձեռագրին մէջ.

«Յիմար Գրիգորս Արճիշեցի,

Կոխտն ամեն վարդապետի

Ջ թռակունի, ի ԻԹ աւելորդի (1480)

Ի սբ. Երուսաղէմս եկի.

Գ. տարի ի տեղս կայի:

Չաւետարանս Քրիստոսի,

Չգլուխն ուր Ղուկաս անուանի,

Որ է մեկնեալ Իգնատիոսի

Աստուածաբան հոռորի,

Բաներ ունի յոյժ պիտանի,

Քաղցրահամ քան զխորիսս մեղուի,

Ըստ իմ տկարութեանս կարի

Բանիկ բանիկ դաս ստացի

Աւգնականութեամբն Յիսուսի.

Ի ս. Գէորգ սկիզբն առի

Ի նոր կիւրակէն վճարեցի.

Կապն էր հնացել նոր կազմեցի,

Հոգեւոր եղբայրն մեր բարի

Քաջ վարդապետն Յասյի,

Որ է ամէն շնորհաւքն ի լի.

Հմուտ ամենայն արհեստի.

Ի կապին այս սբ. կտակի

Խրատատու եղև մեզի:

Որք հանդիպիք այսմ տառի

Ընթերցմամբ կամ աւրինակի,

Միշտ յիշեցէք զմեզ յաղաւթի,

Ասացէք մեզ Աստուած ողորմի.

Նայ որ առատն է ի տուրս բարի

Չեզ և մեզ հաւասար ողորմի»: (Խապ. Յուզ. տետր

Թ. էջ 807-8):

ԳՐԻԳՈՐ ՎՐԳ.— Մբ. 1618 ին, Ա. Յարութեան տաճարին